«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Էքսկուրսիան որպես պատմություն առարկայի գործնական աշխատանքի կազմակերպման տեսակ

ԱՌԱՐԿԱ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Նառա Միկոյան

ՄԱՐԶ Լոռու

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան թիվ 6 դպրոց

Ղեկավար Մ. գ. դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Ծատուրյան

Բովանդակություն

1. Ներածություն----------1

2. Պատմական թեմատիկայով էքսկուրսիաների

անցկացման առանձնահատկությունները և մեթոդիկան----------5

3. Պատմական էքսկուրսիա դեպի

<<Լոռու պատմամշակութային հուշարձանները>>----------7

4. Եզրակացություն----------10

5. Գրականություն----------13

Ներածություն

Սովորողների հետաքրքրասիրությունների, ճանաչողական ներուժի բացահայտման և զարգացման շատ ձևեր կան, սակայն անվիճելի է, որ արդյունավետ ձևերից մեկը գործնական աշխատանքն է, որովհետև ամենաարժեքավոր, խոր և մնայուն գիտելիքները նրանք են, որ սեփական ստեղծագործական որոնումների ընթացքում ինքնուրույն են ձեռք բերվում, և ոչ թե այն գիտելիքները, որոնք հրամցվում են և բնականաբար, շատ արագ մոռացվում են, որովհետև մնայուն չեն և անձնական դիրքորոշման, փաստարկման, քննարկման, նմատակային օգտագործման, տարբեր տեսակետների, հայացքների համեմատության համար իրենցից որևէ արժեք չեն ներկայացնում: Այսպես՝ Ի. Վ. Երոշկինայի կարծիքով <<երբ չկա արժեքաբանական արգելք, ուսումնական պրոցեսը ուսուցչի համար է մնում որպես պրոբլեմ, իսկ աշակերտի համար ոչ՝ քանի դեռ դրա հանգուցալուծումը սովորողի համար ոչ մի արժեք չի ներկայացնում>> [4, էջ 24]:

Առարկայի առանձնահատկությունից կապված, երաշխավորվում են ընթացիկ ուսումնառության և ստուգման հետևյալ տեսակները. բանավոր հարցում, գործնական աշխատանք, թեմատիկ և կիսամյակային առաջադրանքներ: Պատմություն առարկայի դասավանդման ժամանակ ստուգման վերոնշյալ տեսակները ուսուցման պրոցեսում օգտագործվում են ամբողջությամբ, սակայն, եթե բանավոր հարցման, թեմատիկ և կիսամյակային աշխատանքների համար նախատեսված են բազմաբնույթ առաջադրանքներ, ապա գործնական աշխատանքի համար նախատեսված տեսական առաջադրանքների բնույթը միօրինակ է, <<աշխատանք սկզբնաղբյուրով>> կամ <<ռեֆերատ>>:

<<Աշխատանք սկզբնաղբյուրով>>, <<ռեֆերատ>> առաջադրանքներից յուրաքանչյուրն ունի իր համար նախատեսված գործառնական նշանակությունը: <<Աշխատանք սկզբնաղբյուրով>> գործնական աշխատանքը կիրառվում է ուսուցչի կողմից, որպես թեստային առաջադրանքների բաղկացուցիչ մաս, <<ռեֆերատները>> հանձնարարվում են եզակի դեպքերում և կրում են սովորողների կողմից հանձնարարված աշխատանքի

ներկայացման մեխանիկական, ոչ ստեղծագործական, կրկնօրինակման բնույթ, այստեղ ընդհանրապես բացակայում է խնդիրը տեսնելու, հարցադրումներ անելու, վարկածներ առաջ քաշելու, հասկացությունների սահմանումնորը տալու, հետազոտելու, եզրակացություններ և եզրահանգումներ կատարելու, նյութն ամբողջացնելու, բացատրելու, ապացուցելու, սեփական կարծիքները պաշտպանելու կարողությունները: Մեթոդիստները նշում են, որ ռեֆերատների հանձնարարումը հիմնական դպրոցում պետք է սկսել առանձին թեմաներից, իսկ ավագ դպրոցում բարդացնել խնդիրը, հանձնարարելով ընդհանրացնող և ավելի հիմնախնդրային աշխատանքների թեմաներ: Ռեֆերատը՝ հաղորդում է որևէ թեմայի վերաբերյալ, որի պատրաստելու համար աշակերտները պետք է դրսևորեն որոշակի հմտություններ ու կարողություններ:

Ռեֆերատը բացահայտում է.

1. Սովորողի գիտելիքները,

2. Գիտական գրականության և սկզբնաղբյուրի հետ աշխատելու հմտությունները,

3. Դրանք կազմելու ընդունված չափորոշիչներին տիրաթպետելու աստիճանը/հղումներ կատարելը, գրականության ցանկ կազմելը/,

4. Համապատասխանելը կառուցվածքային չափորոշիչներին/տիտղոսաթերթի ձևավորումը, պլանի կառուցվածքը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություններ, գրականության ցանկ/:

5,Ռեֆերատի դրույթների ներկայացման և ամփոփման ընդունակությունները: Ռեֆերատ պատրաստելու համար աշակերտը պետք է դրսևորի համակարգված մոտեցում: Այն ենթադրում է. ռեֆերատ գրելու նպատակի հիմնավորում, կազմել պլան, ընտրել գրականությունը, գրքերից և սկզբնաղբյուրներից դուրս գրել հիմանական գաղափարները և դրույթները, վերլուծել մշակած նյութերը, համակարգել և շարադրել նյութը, ձևակերպել եզրահանգումները:

1. Պատմական թեմատիկայով էքսկուրսիաների անցկացման առանձնահատկությունները և մեթոդիկան

Պատմության դասավանդման ընթացքում հարկավոր է սովորողների մեջ գիտելիքը համադրելու, զարգացնելու նաև դիտելու, վերլուծելու և ընդհանրացնելու կարողությունները ձևավորել: Իսկ դրան կարելի է հասնել նաև պատմություն առարկայի ծրագրով նախատեսված նյութն արտադասարանական միջոցառումների ձևով կազմակերպվող էքսկուրսիաների միջոցով:

Էքսկուրսիան ծագել է լատիներեն (excusio-ուղևորություն) բառից և նշանակում է առերեսում պատմության և մշակույթի իրական հուշարձանների հետ, որոնք գտնվում են պատմական և կամ արհեստական (թանգարանային) միջավայրում՝ մարդկային հասարակության անցած ճանապարհի ոսումնասիրման մեթոդաբանություն կիրառվել է 9-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբին Եվրոպայի և Ռուսատանի առաջադեմ մանկավարժների կողմից, որոնք հանդես էին գալիս դասավանդման քարացած մեթոդների և մտածողության դեմ [5,էջ 598]: Էքսկուրսիան որպես գործնական աշխատանքի տեսակ առարկայական ծրագրի մեջ չի մտնում, այլ դիտվում է որպես արտադասարանական միջոցառում: Էքսկուրսիան և հատկապես պատմական էքսկուրսիան որպես ուսումնառության հաջողության միջոց, ունի իր նպատակը, նախապատրաստման, անցակացման ընթացքը և գնահատման կամ ացնկացման փուլերը: Պատմական էքսկուրսիան որպես գործնական աշխատանքի տեսակ հիմնված է արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչահեն գիտելիքների կայուն իմացության վրա և ենթադրում է պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն: Պատմական էքսկուրսիայի իրականացումը պահանջում է ինքնատիպ մոտեցում հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլեր, գիտական հիմնավորումները և այլն:

Պատմական թեմատիկայով էքսկուրսիայի անցկացումը ունի որոշակի

առանձնահատկություններ, որոնք ըստ բովանդակության լինում են՝ պատմաաշխարհագրական, հնեաբանական և ազգագրական։ Պատմական էքսկուրսիայի համար որպես ընտրության վայր կարող են լինել պատմական հուշարձանները, հիշարժան վայրերը, որոնք կապված են պատմական իրադարձությունների, պատմակամ դեմքերի, առանձին հերոսների կատարած սխրագործությունները, պատմության, արվեստի և մշակույթի թանգարանները և այլն։ Հաճախ պատմական էքսկուրսիայի համար նախատեսված վայրերը ունեն ոչ մայն ուսումնական, գիտական, այլև ճարտարապետական նշանակություն, ուստի ուսուցիչը պարտավոր է ներկայացնել ոչ միայն դրա բովանդակությունը, այլև ճարտարապետական ուղվածությունն ու կառուցողական խնդիրները։ Պատմական թեմաներով կազմակերպված էքսկուրսիաները պետք է կառուցված լինեն ճշգրիտ և արդեն հայտնի նյութի հիման վրա, որովհետև ուսուցչի հիմնական մեթոդաբանական մոտեցումը պատմական իրադարձության կամ երևույթի վերստեղծումն է, իսկ եթե այդ հուշարձանը կամ կառույցը փլատակների է վերածվել և չի պահպանվել, ապա ուսուցիչը պատմականության մեթոդի օգնությամբ ներկայացնում է նախօրոք պատրաստած դասը կամ թեման։ Երբ ուսուցիչը նախապատրաստում է որևէ նյութ կոնկրետ պատմական կառույցի մասին՝ նա պարտավոր է իր թղթապանակում ունենալ ոչ միայն բանավոր շարադրանքի համար նախատեսված թեզիսային հիմնավորումներ, այլև լուսանկարներ, որպեսզի տվյալ կառույցի մասին նյութը լինի ամբողջական և հիմնավոր։ Մյուս կողմից ուսուցիչը պետք է պատրաստ լինի տվյալ պատմական էքսկուրսիայի ժամանակ պատասխանել սովորողների կողմից բարձրացված հարցերին, բավարարել նրանց հետաքրքրասիրության շրջանակները։ Ուսուցիչը պետք է պատմական էքսկուրսիան կազմակերպի արդիականությանը համահունչ՝ ներկայացնելով տվյալ երևույթի, անձի, հուշարձանի, թանգարանի բովանդակության մասին ժամանակակից հնարավոր բնութագրականներն ու մեկնաբանությունները։

Մանկավարժական գրականության մեջ նկարագրված է էքսկուրսիայի անցկացման մեթոդիկան, որն ընդգրկում է երեք փուլ.

1. ուսուցչի և աշակերտի նախապատրաստվելը,

2. էքսկուրսսիայի անցկացման ընթացքը,

3. արդյունքների ամփոփումը։

Բ.Վ. Եմելյանովը առաջարկում է պատմական էքսկուրսիաների անցկացման հետևյալ ուղղվածությունը՝

- ըստ բովանդակության,
- ըստ անցկացման վայրի,
- ըստ մասնակիցների քանակի և այլն։

Ըստ բովանդակության էքսկուրսիաները լինում են

- թեմատիկ,
- ուսումնական,
- ընդհանրական,
- գովազդային և այլն [3, էջ 37]։

Ըստ բովանդակության պատմական էքսկուրսիաները իրականացվում են տարբեր պատմամշակութային հուշարձանների, կոթողների, օջախների, հոգևոր-վանական կառույցների ցուցադրման միջոցով։

Թեմատիկ էքսկուրսիաները լինում են գավառագիտական, ազգագրական, հնեաբանական, ռազմական-պատմական, նյութա-արտադրական և այլ ուղղվածության և բովանդակության։

2. Պատմական էքսկուրսիա դեպի

<<Լոռու պատմամշակութային հուշարձանները>>

Որպես թեմատիկ էքսկուրսիայի օրինակ, կներկայացնեմ իմ կողմից կազմակերպված <<Լոռու պատմամշակութային հուշարձանները>> արտադասարանական ծրագրով նախատեսված դեպի Լոռե բերդաքաղաք էքսկուրսիայի նախապատրաստումն ու անցկացումը: Այս նպատակով ուսուցիչը պարտավոր է տալ հետևյալ հարցերի պատասխանները, որոնք և կհանդիսանան էքսկուրսիայի հիմնական նպատակը: Ո՞րտեղ է գտնվում Լոռե բերդաքաղաքը, ե՞րբ է այն կառուցվել և ու՞մ կողմից, ի՞նչպիսի տնտեսական և քաղաքական նշանակություն է ունեցել միջնադարյան Հայաստանի կյանքում: Այս հարցերի պատասխանների մի մասը աշակերտը կարող է ստանալ դասագրքից՝ <<Բագրատունյաց թագավորության քաղաքական մասնատումը>> թեման սերտելու ընթացքում, սակայն էքսկուրսիայի ժամանակ ցանկալի է, որ ուսուցիչը չբավարարվի դասագրքային նյութով, որովհետև այն չափազանց սահմանափակ է թեմատիկ էքսկուրսիայի ողջ բովանդակությունը բացահայտելու համար և ցանկալի է, որ ուսուցիչը աշակերտներին ներկայացնի լրացուցիչ նյութ, որը թույլ կտա պատասխանել նրանց հետաքրքրող բոլոր հարցերին: Գրեթե նույն հարցերը ուսուցիչը կարող է տալ 7-րդ դասարանի աշակերտներին, որպեսզի նրանք ևս բացի դասագրքի տեքստից, ուսումնասիրեն տարբեր աղբյուրներ՝ մենագրություն, գիտահանրամատչելի, պատմական, գրականություն, պատմական բառարաններ և այլն, տեղեկատվություն

վերցնեն հանձնարարված նյութի մասին՝ ուսումնասիրված նյութը նաև վերլուծելու և գնահատելու նպատակով։ Երբ աշակերտների խումբը հասնում է բերդաքաղաքի պարիսպների մոտ ուսուցիչը կարճ դասախոսության միջոցով ներկայացնում է նախապես պատրաստած նյութը, որը հիմնականում կունենա հետևյալ բովանդակությունը։

Լոռե բերդաքաղաքը գտնվում է Ստեփանավան քաղաքից 5կմ հեռավորության վրա, Զորագետ և Միսխանա գետերի կիրճերով եզերված սարահարթի մեջ։ Հիմնադրվել է Անիի Բագրատունիների Կյուրիկյան ճյուղի նշանավոր ներկայացուցիչ Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Անհողինի (989-1048թթ.) կողմից։ Այդ մասին տեղեկացնում է Վարդան Բարձրբերդցին, որը պատմելով նրա որդու Կյուսրիկո Ա-ի մասին, հիշատակում է. <<Սմա հայրն Դաւիթ շինեաց զԼոռի և այլ ևս երկոտասան բերդս...>> [2, էջ 142]։ Լոռե բերդաքաղաքը եղել է Տաշիր-Զորագետի կամ Կյուրիկյան թագավորության (հիմնադրվել է 982 թվականին Գուրգեն-Կյուրիկե Բագրատունու կողմից) մայրաքաղաքը։ Ինչպես հայկական բերդերից շատերը Լոռեն ևս բաղկացած է միջնաբերդից, շահաստանից և արվարձաններից։

Լոռեն քաղաքաշինական վերելք է ապրել XI դարի երկրորդ ԿԵՍԻՑ, ԵՐԲ 1065թ. Կյուրիկե Ա-ն այն դարձրեց Տաշիր-Զորագետի թագավորության մայրաքաղաք: Միջնաբերդի պարիսպը ուներ 214 մ, երկարություն, պարիսպների հաստությունը տեղ-տեղ հասնում էր 22 մ, բարձրությունը 25 մ: Պարիսպները կառուցված են տեղական բազալտ քարոով կապակցված կրաշաղախով: Միսխանայի կիրճին մոտիկ գտնվում է միջնաբերդի միակ մուտքը, որ ունեցել է ներքին և արտաքին դարպասներ (պահպանվել միայն արտաքին դարպասի կամարակապ բացվածքը): Միջնաբերդը պաշտպանական առումով խիստ բարենպաստ պայմաններ է ունեցել: Բերդի տարածքում պահպանվել են եր կու բաղնիքի մնացորդներ: Ջրամատակարարումը կատարվել է կավե փողրակներով: Միջնաբերդի կենտրոնական մասում պահպանվել է պաշտամունքային շինություն: Բերդը արվարձաններին կապող կամուրջներից պահպանվել է միայն Միսխանա Գետի վրա կառուցված սլաքաձև կամարով կամուրջը: 1105թվականին բերդին տիրել են սելջուկները: 1118թվականին վրաց Դավիթ Շինարար թագավորը Լոռե բերդաքաղաքը միացրեց Վրաստանին և այն տրվեց Օրբելյան տոոհմին: 1185թ.-ից բերդաքաղաքի տերերը դարձան Զաքարյանները, ովքեր կառուցեցին մի շարք եկեղեցական և քաղաքացիական շինություններ, կամուրջներ և այլն: Այս շրջանում բերդաքաղաքի բնակչության թիվը հասնում էր տասը հազար մարդու: Բերդը ավերվել և մեծ չափով տուժել է մոնղոլական արշավանքների արդյունքում: Այս մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Կիրակոս Գանձակեցին [1,էջ 182-183]: Այս իրադարձություններից հետո բերդաքաղաքին տիրել են թուրքերը, պարսիկները և այլն ու երբեմն ուժեղ և կարևոր նշանակություն ունեցող բերդաքաղաոքը կորցրել է իր տնտեսական և քաղաքական նշանակությունը, իսկ XVIII դարում արդեն լքված ու ավերված վիճակում էր, երբ այնտեղ հաստատվեցին տարբեր վայրերից տեղահանված գաղթական հայեր հիմք դնելով Լոռի Բերդ գյուղին: Բերդաքաղաքի մասին քտեղեկությունները մեզ եսն հասել ոչ միայն գրավոր աղբյուրներից, այլև 1966 թվականից բերդի տարածքում կատարված պեղումներից, որոնց արդյունքում հայտնաբերվել են տարբեր շինությունների փալատակներ, զենքեր, զարդեր, խեցեղեն,

դրամներ, կենցաղային իրեր և այլ նյութական վկայություններ։

Հենց բերդի տարածքում աշակերտները կարող են ներկայացնել նաև իրենց կողմից յուրացրած նյութը այն համադրելով նյութական վկայությունների հետ, որոնք ակամայից իրենց աչքի առաջ են, տեսանելի և խոսուն։ Շրջելով բերդի տարածքում աշակերտները ուսուցչի ցուցումով վերադառնում են մուտքի մոտ, որտեղ էլ կիսում են իրենց տպավորությունները միմյանց հետ, պատասխանում տարաբնույթ հարցերի, մեկնաբանում և վերլուծում իրենց կարծիքները։ Ապա ուսուցիչը սովորողներին տալիս է հանձնարարություն՝ գրել ռեֆերատ աշխատանք հետևյալ թեմայով. <<Լոռե բերդի ավերակները>>։

Նպատակային էքսկուրսիաների անցկացումը ÑÝ³ñ³íáñáõÃÛáõÝ ¿ ï³ÉÇë ëáíáñáÕÝ»ñÇÝ áõß³¹ñáõÃÛáõÝ ¹³ñÓÝ»É å³ïÙáõÃÛ³Ý ¨ Ñ³ñ³ÏÇó ³é³ñÏ³Ý»ñÇ (³ßË³ñÑ³·ñáõÃÛáõÝ, Ñ³Ûáó É»½áõ, ·ñ³Ï³ÝáõÃÛáõÝ) ÷áË³¹³ñÓ Ï³åÇÝ, Ó¨³íáñáõÙ »Ý å³ïÙ³Ï³Ý ³ÝóÛ³ÉÁ Ù»ÏÝ³µ³Ý»Éáõ Ï³ñáÕáõÃÛáõÝ:

²ÛëåÇëáí, å³ïÙ³Ï³Ý ¿ùëÏáõñëÇ³Ý áñå»ë ·áñÍÝ³Ï³Ý ³ßË³ï³ÝùÇ ï»ë³Ï, Ñ³Ù³ñíáõÙ ¿ áõëáõÙÝ³Ï³Ý Íñ³·ñáí Ý³Ë³ï»ëí³Í ·Çï»ÉÇùÝ»ñÇ Ó»éùµ»ñÙ³Ý, ³Ùñ³åÝ¹Ù³Ý, ¹ñ³Ýù ·áñÍÝ³Ï³ÝáõÙ ÏÇñ³éÙ³Ý, ëáíáñáÕÝ»ñÇ ³ßË³ñÑ³×³Ý³ãáÕáõÃÛ³Ý, Ñ»ï³ùñùñ³ëÇñáõÃÛ³Ý ½³ñ·³óÙ³Ý ÙÇçáó: ØÇ³Å³Ù³Ý³Ï ÝÙ³Ý Ã»Ù³ïÇÏ ¿ùëÏáõñëÇ³Ý»ñÇ Ï³½Ù³Ï»ñåáõÙÝ áõ ³ÝóÏ³óáõÙÁ ÙÇçáó ¿ ëáíáñáÕÝ»ñÇ Ù»ç ë»ñÙ³Ý»É ë»ñ Çñ ï³ñ³Í³ßñç³ÝÇ, Ñ³Ûñ»ÝÇ »ñÏñÇ å³ïÙ³Ï³Ý ³Ýóáõ¹³ñÓÇ, ù³ñ» íÏ³Ý»ñÇ ÝÏ³ïÙ³Ùµ, å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý, Ñ³Ûñ»Ý³ëÇñáõÃÛ³Ý ½·³óáõÙ Ñ³Ûñ»ÝÇùÇ Ñ³Ý¹»å: ì»ñç³å»ëª å³ïÙáõÃÛáõÝ ³é³ñÏ³ÛÇ ã³÷áñáßÇãÁ ë³ÑÙ³ÝáõÙ ¿ ³ÛÝåÇëÇ å³Ñ³ÝçÝ»ñ, áñáÝù ÙÇïí³Í »Ý ëáíáñáÕÇ ³½·³ÛÇÝ Ñá·»Ï»ñïí³ÍùÇ Ó¨³íáñÙ³ÝÁª å³ÛÙ³Ý³íáñ»Éáí Ñá·¨áñ ¨ ³½·³ÛÇÝ ³ñÅ»ùÝ»ñÇ ×³Ý³ãáõÙ ¨ ·Ý³Ñ³ïáõÙ, ¹ñ³Ýó ÝÏ³ïÙ³Ùµ áõÝ»ó³Í å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý ·Çï³ÏóáõÙ

Պատմական թեմատիկայով էքսկուրսիայի անցակցումը հնարավորություն է տալիս սովորողներին ուշադրություն դարձնել պատմության և հարակից առարկաների (աշխարհագրություն, հայոց լեզու, գրականություն) փոխադարձ կապին, ձևավորում են պատմական անցյալը մեկնաբանելու կարողություն:

Այսպսիսով, պատմական էքսկուրսիան որպես գործնական աշխատանքի տեսակ, համաարվում է ուսումնական ծրագրով նախատեսված գիտելիքների ձեռքբերման, ամրապնդման, դրանք գործնականում կիրառման, սովորողների աշխարհաճանաչողության, հետաքրքրասիրության զարգացման միջոց: Միաժամանակ նման թեմատիկ էքսկուրսիաների կազմակերպումն ու անցկացումը միջոց է սովորողների մեջ սերմանել սեր իր տարածաշրջանի, հայրենի երկրի պատմական անցուդարձի, քարե վկաների նկատմամբ, պատասխանատվության, հայրենասիրության զգացում հայրենիքի հանդեպ: Վերջապես պատմություն առարկայի չասփորոշիչը սահմանում է այնպիսի պահանջներ, որոնք միտված են սովորողի ազգային հոգեկտրվածքի ձևավորմանը պայմանավորելով հոգևոր և ազգային արժեքների ճանաչում և գնահատում, դրանց նկատմամբ ունեցած պատասխանատվության գիտակցում:

Եզրակացություն

Պատմության դասավանդումը դպրոցում, հատկապես Հայոց պատմություն առարկայի, ըստ պետական հայեցակարգի, կապվում է հայի ազգային ինքնագիտակցության ու մտածողության հետ, նրա միջոցով ապահովվում է աճող սերնդի հաղորդակցումը մեր ժողովրդի անցյալի և պատմամշակութային ժառանգությանը: Այստեղից է բխում քաղաքացի կրթելու և դաստիարակելու խնդիրը: Դաստիարակչական խնդիրները, հենվելով գաղափարական հիմքերի վրա, անդրադառնում են ուսուցման նյութի բովանդակությանը: Պատմականն կրթությունն ունի քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրություն, ազգասիրություն սերմանելու, ներկա ժամանակների իրողությունների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու, հայկական մշակութային նվաճումները աշխարհի մշակութային նվաճումների հետ համեմատելու նպատակներ: Պատմական գիտելիքների փոխանցման, օրինաչափությունների յուրացման գործընթացը իրականացնում է անձի դաստիարակման և զարգացման տարբեր միջոցներով: Հետևաբար, պատմության դասավանդման արդիականությունը ուղղակիորեն կապված է ակտիվ դիրքորոշում ունեցող քաղաքացի ձևավորելու, խնդրի հետ: Այս խնդրի լուծումը չի սահմանափակվում դաս-դասարանային մեթոդներով, այլ ենթադրում է արտադասարանային տարբեր աշխատանքների կազմակերպում:

Արտադասարանական աշխատանքը ուղղված է պատմական անցյալի ու ներկայի ճանաչողությանը, պատմական գիտելիքների խորացմանը, աշակերտների մոտ բազմակողմանի հետաքրքրությունների զարգացմանը: Այն կազմակերպում է դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, պատկերացումները և դատողությունները խորացնելու համար: Արտադասարանական աշխատանքները դասակարգվում են ըստ մասնակցության թվի՝ զանգվածային, խմբային և անհատական:

Արտադասարանական աշխատանքի ընթացքում պատմական նյութի մատուցման համար կիրառվող միջոցները տսղարբերվում են դասարանայինից: Այս դեպքում հնարավոր է աշակերտներին ծանոթացնել հնագիտական, վիմագրական և այլ նյութերի, որը դասարանում մատչելի չէ: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ինքնուրույն իմատավորել երևույթները:

Պատմության ուսուցման համար կարևոր նշանակություն ունեն էքսկուրսիաները։ Դրանք կարող են լինել էքսուրսիաներ պատմամշակութային նշանակություն ունեցող հուշարձաններ, վայրր, թանգարաններ, պետական կամ ոչ պետական հաստատություններ։ Պատմության դասավանդման արդյունավետ դասի տիպերից է դաս-էքսկուրսիան։ Այն դիտվում է որպես ուսուցչի և սովորողների առանձնահատուկ համագործակցության ձև։ Դաս-էքսկուրսիայի առավելությունը նրանում է, որ էքսկուրասիայի միջոցով դասի ժամանակ ուսումնասիրած նյութին, առարկաներին և երևույթներին աշակերտները կարող են հետևել բնական պայմաններում կամ թանգարանում։ Էքսկուրսիան կարող է լինել կամ հիմնական դասին լրացնող աշխատանք, ուղղակի թեմայի ներկայացման ձև։ Ամեն դեպքում ինչպես դասարանային դասը, այնպես էլ էքսկուրսիան ունեն նույն նպատակները. պատմական գիտելիքների հաղորդում, նյութի յուրացում, աշխարհայացքի ձևավորում։ Աշակերտների ճանաչողական գործունեությունը, դրան հետևող ընդհանրացումները և եզրակացությունները կատարվում են դիտումների ընթացքում և հաճախ կրում են զգացմունքային բնույթ։ Դրանում են դասի ու էքսկուրսիայի տարբերությունները, որոնք փաստորեն վերաբերում են գործունեության ձևերին ու դերերին։ Էքսկուրսիաները ստեղծում են լայն մանկավարժական հնարավորություններ։ Այսպես էքսկուրսիայի ժամանակ հնարավոր է որոշակիացնել հասկացությունները, ստեղծել վառ, պատկերավոր ընկալում։ Էքսկուրսիայի ժամանակ սովորողները ուսումնասիրում են երևույթները և իրադարձությունները բնական պայմանների և թանգարանային նյութի միջոցով անցյալի վերականգման գործընթացում։ Կախված ուսումնասիրվող թեմայից, տեղից և ուսումնասիրման պայմաններից առանձնացվում են էքսկուրսիաների 4 տեսակներ.

1. էքսկուրսիաներ պատմական նշանավոր վայրերով կամ արտաթանգարանային էքսկուրսիաներ,

2. հատուկ պահոցներում, նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների դիտման, թանգարանային էքսկուրսիաներ,

3. համալիր կամ թեմատիկ էքսկուրսիաներ,

4. երկրագիտական \գավառագիտական/ էքսկուրսիաներ։

Դիդակտիկական նպատակներով կազմակերպվող էքսկուրսիաները բաժանվում են 3 խմբի.

1. Ներածական. նախորդում է ուսումնասիրվող թեմային ուսումնասիրման նպատակով
2. Ընթացիկ, ուսուցանվող թեմայի ընթացքում կազմակերպվում է այցելություն որևէ թանգարան,
3. Հանրագումարային. մեկ կամ մի քանի թեմաների ուսումնասիրությունից հետո ամփոփման նպատակով։ Էսկուրսիաների դերը կայանում է նրանում, որ պատմական գիտության նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելուց բացի՝ դրանք ուժեղացնում են աշակերտների հայրենասիրական ձգտումները, ընդլայնում են մտահորիզոնը, նպաստում մշակութային դաստիարակությանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, (թար. մանությունը, առաջաբանը և ծանոթա. րությունները Վ. Առաքելյանի), Եր., 1982, հայ մատենագիտական գրադարան էջ 568։

2. Վարդան Բարձրբերդցի,Պատմութիւն տիեզերական, Մ., 1861, Լազարյան ճեմարան, 462 էջ։

3. Б. В. Емельянов, Экскурсоведение,М.Б Советский спорт, 2007, 128 с.

4.И. В. Ерошкина, Структура исследовательской деятельности учащихся основной школы в современном развивающем образовании, Педагогическое образование в Россииб 2012. N3, с. 168.

5.Советская историческая энциклопедия, М., 1961-1976, 1003с.